

հետազոտութիւններէն յառաջ բերուած փաստերն, — թէ եւ չըլլան Մորդմանի եւ Հիսարլեանի ստուգարանութեանց չափ ծիծաղական, — եւ ոչ Փիլիստրատոսի այլ ընդ այլոյ աւանդած վէպն՝ հիմնաւոր եւ բաւական կըռուաններ կրնան համարուիլ, հաստատելու թէ ստուգիւ Վանի եւ Ուրարտայ սեպածեւ արձանագրութիւնները գործածող ժողովուրդներն՝ ծագմամբ եւ լեզուով նոյն էին Քրիստոսէ Ե դար յառաջ կամ վերջ այն երկիրներու մէջ ապրող Հայոց հետ. ո՞ր թողունք որ նոքա ունեցած ըլլան փիւնիկեան նշանագրերով գրականութիւն, եւ թէ այդ նշանագրերը պահուած ըլլան մինչեւ փրկչական թուականի Ե դարը: Փափագելի էր, որ դուք աւելի խստապահանջ լինէիք առ այս, փոխանակ եղբայրացնելու, թէ 128—115 նակ քան զՔրիստոս « Հայք ունէին ազգային տառեր »:

Բէլ 9 մէջ բերուած Խորենացոյ վկայութիւնն՝ եթէ անմիջապէս յառաջ կորեան վրկայութեան հետ նոյն համարուի, կորեան այս տեղ դանիէլեան նշանագրերը բոլորովին օտար դպրութեանց մէջ « թաղուած եւ յայտնուած », այսինքն է՝ անգործածական մնացած եւ յետոյ երեւան եկած կը համարի, քան թէ ի վաղուց Հայոցմէ գործածուած: Փարպեցոյ « գոն նշանագիրք հայերէն լեզուին » եւ այլն բացատրութեամբ պարզապէս զրոյց մի կամ լուր մի հասկնալի է, հասեալ յերկիրն Հայոց զի նա բնաւ տեսած չէր այն նշանագրերը, թող թէ նոցա եղելութիւնն ստուգած: Վարդանայ՝ յաւուրս Լեւոնի արքայի պատմած վէպն, այն է՝ հայկազուն թագաւորաց փիւնիկեան գրերով դահեկան գտնուիլն եւ՝ Բալուի արձանագրութեան յեղաշրջուած վէպին քով դասելի է ըստ իս. իսկ եթէ իրօք հանդիպած է երբէք, ըստ Պետրմանի աւելի պահլաւիկ դրամներ եւ վերտառութիւններ ըլլալու հաւանականութիւնն ունին, քան թէ Աքեմենեան դրամներ՝ փիւնիկ վերտառութեամբ: Հետեւաբար ինչպէս ես՝ այսպէս եւ դուք ապահով եղէք, որ Վարդան ոչ այդ դրամներուն ակնատես եղած է անձամբ, եւ ոչ իսկ ընթերցած. ապա թէ ոչ չպիտի լռէր նա այն թագաւորաց անուանքը յիշելու, որ Խորենացոյ պատմութեան նկատմամբ յոյժ պիտանի պիտի լինէին այժմ:

Բէլ 10 նախամետրոյքեան, կամ փիւնիկահայ կոչուած տառերը մինչեւ փրկչական թուականի Գ դարն ի գործածութեան եղած կը համարիք, գոնէ մեհենական արձանագրութեանց մէջ, եւ առաջին անգամ Հայոց Լուսաւորչի ձեռքով ոչնչացած: Չեր այս եզրակացութիւնը, երեւի թէ հանած էք

յաջորդ էջերում մէջ բերուած Վարդանայ, կորեան, Խորենացոյ եւ Ղազարայ վկայութիւններէն. սակայն դիտել կու տանք, որ այդ հեղինակաց քով իսօք մ'անգամ չի կայ դանիէլեան նշանագրոց երբ հնարուած եւ կամ Լուսաւորչի ձեռքով բարձիթողի եղած լինելուն վրայ: Այո՛, նոցա մասնանիչ ըրած անյալող փորձն իսկ՝ Սահակայ եւ Մետրոյբայ օրերը միայն տեղի ունեցած է. անկեց առաջ ուրիշ փորձ չեն ձանչնար Հայոց քով, թող թէ դարերով անընդատ անոր յաղող գործածութիւնը եւ զրականութիւնը: Իսկ այլուր մէկ կողմէն պարթեւ արշակունի թագաւորաց յունատառ դահեկաններն, եւ միւս կողմէն ալ տոհմային եւ օտարազգի պատմագրաց աւանդութիւններն ընդհակառակն ցոյց կու տան, թէ ոչ միայն Հանոյ մեհենական արձանագրութիւնք, այլ եւ Հայոց քաղաքական յիշատակարաններն յոյն եւ պարսիկ լեզուով եւ տառերով կը գրուէին. փիւնիկեցոյ հետքն անգամ չերեւիր: Այս տեսակէտով պէտք է ըսել, ի սէր ճշմարտութեան, թէ ձեր յարուցած Բ հարցը գոհացուցիչ կերպով լուծուած չէ դեռ. եւ թէ առ ի հաւաստել զայն՝ հարկ էր դիմել աւելի նոր եւ լուրջ հետազոտութեանց:

Բէլ 14, 2 հարցման տուած ձեր լուծումը, հակառակ Հ. Պարոնեանի, այսինքն թէ Դանիէլի յանձնածն առ Ս. Մետրոյբ, պարզապէս ցանկ մ'էր նշանագրոց եւ անբաւական ցանկ, — ինչպէս փորձն իսկ յետոյ հաստատեց, — եւ ոչ թէ ամբողջական գիրք մի, ամենածիշխ է համեմատութեամբ հակառակ կարծիքին. բայց Վահրիճի եւ Հարէլի ձեռքով եղած կարգաւորութիւնն կը թուի ցուցընել, թէ ընդարձակ արձանագրութիւն մ'ըլլար այն՝ բովանդակող հին տառից: Յայսմ ես եւս ձեզ համակարծիք եմ. բայց ձեզ հետ կերպ մի հակասութեան մէջ չինկնալու համար, կը մերժեմ ընդունել, թէ նախալուսաւորչեան Հայերն՝ երկայն դարեր անոնցմով մատենագրել բաւականացած ըլլան:

Է հարցման մէջ իրաւամբ մերժած էք դուք Յարութիւնեանցի՝ դանիէլեան նշանագրոց երբեմնի բաւականութեան եւ Մետրոյբայ օրերն անբաւական լինելու մասին արտայայտած կարծիքը. զի ընդունելով իսկ, թէ Հայք Լուսաւորչէն մինչեւ մետրոյբեան դարը գրականական մեծ զարգացումն ըրած ըլլան, սակայն այդ զարգացումն աւելի յոյն եւ ասորի, քան թէ հայերէն լեզուով եղած ըլլալու էր: Նախամետրոյքեան հայերէն առաջին եւ նշանաւոր զարգացումն կատարուած է, ըստ իս, պարթեւ հարստութեան շրջանին մէջ եւ պահլաւիկ լեզուի ազդեցու-